

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ապրիլի 10-ին, կիրակի. Զատիկ. Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Դարձյալ Զատիկ է. քրիստոնեական եկեղեցու ցնծության և բերկրանքի տոնը:

Գարուն է. բնության մեջ և մարդկանց հոգիներում:

Վաղ առավոտյան մայրավանքի շրջապատում տիրում է աշխույժ տրամադրություն: Հազարավոր հավատացյալներ Մայր Աթոռ են փութացել՝ ներկա լինելու զատկական մեծ տոնակատարությանը և սուրբ պատարագին:

Ճիշտ ժամը 11-ին ուրախ զողանջներով հնչում են Մայր տաճարի զանգակները:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը, տոնական հանդիսավորությամբ, շրջապատված Մայր Աթոռի միաբանությամբ, եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու զատկական ս. պատարագ:

Վեհ ու խրոխտ հնչում են «Գովեա Երուսաղէմ զՏէր» և «Յարեաւ Քրիստոս» հոգեզմայլ տաղերը Մայր տաճարի երգչախմբի կատարմամբ՝ ղեկավարությամբ Խորեն Մելիսանեջյանի:

Ս. պատարագին ներկա են ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող լիբանանահայ ծանոթ հասարակական գործիչներ՝ Ավետիս Դեմիրճյանը, «Արարատ» օրաթերթի խմբագիր Ժիրայր Նաիրին:

Ս. պատարագին և հայրապետական քարոզին ներկա են նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով բովանդակ հայության Զատիկը, քարոզում է ս. Հարության տոնի հոգևոր և պատմական նշանակության մասին: Հայրապետական սույն քարոզը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3): Զատկական սույն քարոզը նաև ձայնասփռվում է երեկոյան ժամը 24-ին Երևանի ռադիոյից:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Վեհարան, ուր ընդունում է շնորհավորանքներ զատկական տոնի առիթով:

Այստեղ Վեհափառ Հայրապետը ողջունում և բարի գալուստ է մաղթում Զատկվա տոների առիթով ուխտավորաբար ս. Էջմիածին ժամանած ֆրանսահայերի մի մեծ խմբի՝ գլխավորությամբ Փարիզի կրոնական ընկերակցության ներկայացուցչական շողովի անդամ Արմենակ Գուլումջյանի: Վեհարանում Հայոց Հայրապետի Զատիկը աջահամբույրով շնորհավորում են և՛ ֆրանսահայ ուխտավորները, և՛ մայր հայրենիքում սովորող սփյուռքահայ երիտասարդաց խումբը:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը

տրվում է զատկական ճաշ, որին ներկա են լինում տ. Կոմիտաս, տ. Վահան, տ. Արսեն սրբազանները, տ. Անանիա, տ. Եզնիկ, տ. Մոմիկ և տ. Թորգոմ վարդապետները և սարկավագաց դասը:

Հրավիրյալների թվում էին պրն. Սարգիս Գասպարյանը, պրն. Անդրանիկ Հասրաթյանը, պրն. Ավետիս Դեմիրճյանը, պրն. Ժիրայր Նահրին, պրն. Արմենակ Գուլումջյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի ղեկավար անձինք և ուրիշներ:

Օրվա տոնի առթիվ Վեհափառ Հայրապետն Իր բարձր գնահատությանն է արժանացնում Մայր Աթոռի վերոհիշյալ չորս երիտասարդ ու խուստումնալից վարդապետների ծառայությունը՝ զարդարելով նրանց կուրծքը վարդապետական լանջախաչերով:

Հանուն իր ընկերների, որդիական երախտագիտության և շնորհակալության ջերմ խոսք է ասում տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը:

Զատկական ճաշն ավարտվում է Վեհափառ Հոր օրհնությամբ: